ՀԱՄԱԼՐՎԱԾ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԿԱՅԱՑՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԱՐԴԻ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԴԱՐԱՇՐՋԱՆՈՒՄ*

ՀՏԴ 321.7+303

Ժաննա Հարությունյան
ՀՀ ԳԱԱ Փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի հայցորդ, ք.Երևան, Հայաստանի Հանրապետություն
zhanna.harutyunyan@edu.isec.am

Սույն հոդվածում քննարկվում են բարձր տեխնոլոգիաների առաջընթացի պայմաններում ժողովրդավարության թվայնացման միտումները, էլեկտրոնային ժողովրդավարության ձևավորման նախադրյալներն ու արդի շրջանում անցումը համալրված ժողովրդավարությանը: Փորձ է կատարվում վերլուծելու առաջիկա տարիներին ժողովրդավարական համակարգի փոխակերպումը, այն վտանգներն ու սպառնալիքները, որոնք թաքնված են այդ փոխակերպման հիմքում և այն հարցերը, թե ինչպես կարելի է նվազեցնել դրանց ռիսկերն ու ազդեցությունը: Մեծ տվյալների վրա հիմնված ալգորիթմների կիրառումը կարող է քաղաքական գործընթացներում ներմուծել առավել արդիականացված մանիպուլյացիոն «խելացի» մեխանիզմներ, որոնք էլ իրենց հերթին առավել լուրջ սպառնալիք կդառնան ժողովրդավարական ինստիտուտի կայացման համար:

Համալրված ժողովրդավարության համակարգը, ըստ էության, պետք է նպաստի դրական բանավեճերի խթանմանը քաղաքական որոշումների կայացման գործընթացում՝ թույլ տալով իրականացնել մի շարք փորձարկումներ՝ նախքան որևէ կենսական հարցի վերաբերյալ վերջնական որոշում կայացնելը: Համալրված ժողովրդավարության պայմաններում քաղաքացիների վարքային կանխատեսումները հիմնված են օբյեկտիվորեն ձեռք բերված տվյալների մեծ ծավալների, այն է՝ «մեծ տվյալների» վրա, ինչի շնորհիվ էլ քաղաքացիների վարքը կարող է դառնալ առավել քան կանխատեսելի, հետևաբար, խիստ կառավարելի:

Ինչ վերաբերում է ժողովրդավարության նկատմամբ վստահության բարձրացմանը և թվային տեխնոլոգիաներով համալրմանը, նախ և առաջ ժողովրդավար պետությունները պետք է պատասխանեն այն հարցին՝ արդյո՞ք իշխանություններն ազնիվ են քաղաքացիների հետ, և արդյո՞ք թվային համալրման փորձերը չեն նպաստելու «տոտալ թվային վերահսկողության» լեգիտիմացմանը:

Բանալի բառեր՝ *քաղաքական գործընթացներ, էլեկտրոնային ժողովրդավարություն, արհեստական բանականություն, համալրված ժողովրդավարություն, մեծ տվյալներ, թվային տեխնոլոգիաներ, քաղաքական կանխատեսում, որոշումների կայացում, թվային անհավասարություն:*

Ներածություն

---

* Հոդվածը ներկայացվել է 26.01.2022:
Տպագրության է երաշխավորել ք.գ.դ., պրոֆեսոր Տ. Քոչարյանը: 04.02.2022:
Հոդվածը տպագրության է ընդունվել 04.02.2022:

Աշխարհի՝ սրընթաց տեմպերով թվայնացումը նկատելի է բացառապես հասարակության կենսագործունեության բոլոր ոլորտներում՝ հատկապես՝ վերջին տարիներին: Արհեստական բանականության անասելի մեծ թափով զարգացումը, մեծ տվյալների հսկայածավալ բազաները և դրանց հիման վրա կատարվող վերլուծությունները, իրականության ձևափոխումն ու հարմարեցումը թվային միջավայրին, այդ թվում ֆիզիկական տարածության համալրումը թվային տեխնոլոգիաներով տալիս են այն ընկալումը, որ թվայնացման գործընթացը ոչ միայն չի կարող աննկատ անցնել քաղաքական գործընթացների կողքով, այլև ուղղակիորեն ազդում է դրանց վրա և ձևավորում քաղաքական նոր համակարգեր ու բացառապես նոր աշխարհընկալում: Քաղաքական ռեժիմներն՝ անկախ իրենց բնույթից, ոչ միայն ակտիվորեն օգտվում են թվայնացման այս գործընթացից, այլև փորձում են իրենց նպատակներին ծառայեցնել թվային տեխնոլոգիաները:

Քաղաքակիրթ երկրներում իշխանության իրականացման ամենատարածված ձևերից է ժողովրդավարությունը, որը ենթադրում է հասարակության գերիշխանություն պետության նկատմամբ: Ժողովուրդն իրեն պատկանող իշխանությունը կարող է իրացնել ինքնուրույն[1] և իր ընտրած պետական մարմինների կամ պաշտոնատար անձանց միջոցով[2]: Ըստ ՄԱԿ-ի՝ ժողովրդավարության իդեալներն համընդհանուր ճանաչված են և համարվում են ՄԱԿ-ի հիմնարար արժեքներից մեկը: Ժողովրդավարությունը բարենպաստ պայմաններ է ստեղծում մարդու իրավունքների պաշտպանության և արդյունավետ ռեալիզացման համար[3]: Ժողովրդավարության արժեքներն են, որ իրենց արտացոլումն են գտել Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրում[4], հետագայում մշակվել Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրում[5]: Այն ամրագրում է քաղաքական իրավունքների և քաղաքացիական ազատությունների մի ողջ շարք, որոնք իրական ժողովրդավարության հիմքն են:

Բովանդակություն

ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԳՈՐԾԻՔՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

Ժողովրդավարությունը հասարակական բազմաշերտ ինքնաղեկավարման համակարգ է, որը հիմնվում է մարդու իրավունքների վրա, երբ ազատությունն ու հավասարությունն ընդունվում են որպես հիմնարար սկզբունքներ: Ժողովրդավարությունն ըն-

---

[1] Անմիջական ժողովրդավարություն, երբ հասարակության համար կարևոր նշանակություն ունեցող որոշումներն ընդունում են անմիջականորեն բոլոր քաղաքացիները՝ հանրաքվեի կամ ընտրությունների միջոցով:

[2] Ներկայացուցչական ժողովրդավարություն. քանի որ հասարակական բոլոր հարցերը հնարավոր չէ լուծել անմիջականորեն, ուստի առաջանում է ներկայացուցչական ժողովրդավարության անհրաժեշտությունը: Այս դեպքում հասարակական գործերը կառավարում, որոշումներն ընդունում են ժողովրդի կողմից ընտրված մարմիններն ու պաշտոնատար անձինք:

[3] Democracy: global issues. UN: https://www.un.org/ru/global-issues/democracy (last seen 18.11.2021)

[4] Morsink, 2000, 396.

[5] Международный пакт о правах человека. 217 (III) ООН: https://undocs.org/ru/A/RES/217(III) (последний визит 20.01.2022) (վերջին անգամ դիտված 18.11.2021 թ.)

կալվում է որպես հետևողականորեն ինքնակազմակերպվող համակարգ, հետևաբար, ժողովրդավարության ցանկացած տեսություն տեսություն է հասարակական ինքնաղեկավարման համակարգ(եր)ի մասին՝ հիմնված մարդու իրավունքների վրա[1]:

Սակայն այսօր հարցականի տակ է դրվում ՄԱԿ-ի կողմից «հիմնարար սկզբունք» ճանաչված ժողովրդավարական համակարգի ճակատագիրն ու փոխակերպումն առաջիկա տարիներին: Կարևոր է հասկանալ, թե ինչ վտանգներ ու սպառնալիքներ են թաքնված ժողովրդավարության թվայնացման հիմքում, և ինչպես կարելի է նվազեցնել ու մեղմել դրանց ազդեցությունը:

Ըստ Մադրիդյան ակումբի[2]՝ ժողովրդավարացման երրորդ ալիքի սկսվելուց երեսունհինգ և Բեռլինյան պատի փլուզումից քսան տարի անց շատ նոր ժողովրդավարություններ վտանգված են, այդ իսկ պատճառով ավելի քան երբեէ անհրաժեշտ է մտածել այն մասին, թե ինչ անել, որ դրանք ավելի արդյունավետ գործեն: Ժողովրդավարություններից շատերին սպառնացող գերխնդիրներն են անհավասարությունը, կոռուպցիան, ավտորիտար ամբոխավարության նոր ձևերը, վստահության նվազումը, ծրագրահենքային կուսակցությունների թուլությունը և այլն: Առավել արդիական են քաղաքացիական հասարակության և մարդու հիմնարար իրավունքների պաշտպանության մեխանիզմները. քաղաքացիներն ունեն անօտարելի իրավունքներ, բայց եթե չկա ժողովրդավարական ձևով վերահսկվող ճնշիչ ապարատ ունեցող պետություն, նոր ժողովրդավարության պայմաններում քաղաքացիների իրավունքները չեն կարող արդյունավետ կերպով պաշտպանվել[3]:

Ժամանակակից գործընթացները բացատրելը բարդ ու խրթին է դառնում նոր թվային իրականությունում, երբ ժողովրդավարության վրա ազդում են արագընթաց զարգացող տեխնոլոգիաները, և ժողովրդավարական դասական մեխանիզմները համալրվում են կամ փոխարինվում էլեկտրոնային գործիքակազմով ու սկզբունքներով:

Մասնակցությունը ժողովրդավարության կարևորագույն բաղադրատարրերից է, առանց որի ժողովրդավարությունը չի կարող համարվել լիարժեք: Ժողովրդավարության ամրապնդման համատեքստում մասնակցության աստիճանի բարձրացումն անհրաժեշտ է ոչ միայն քաղաքացիներին, այլև՝ հենց իշխանություններին, քանի որ այդ դեպքում վերջիններիս բոլոր որոշումները կհամարվեն շատ ավելի օրինական՝ արտահայտելով մեծամասնության դիրքորոշումը և չհանդիպելով նրանց դիմադրությանը: Ողջ աշխարհում իշխանությունների հանդեպ վստահության պակասն օր օրի ահագնանում է, և անգամ ամենաժողովրդավար հասարակություններում արտակարգ իրավիճակները, առանցքային արմատական փոփոխությունները կամ որոշումները կարող են գործող իշ-

[1] Хворостов, 2020, 12.

[2] Մադրիդյան ակումբն անկախ կազմակերպություն է, որի նպատակն է ամբողջ աշխարհում ամրապնդել ժողովրդավարությունը: Նրա միջուկն են կազմում 68 նախկին վարչապետներ և նախագահներ նոր և վաղուց ձևավորված ժողովրդավարություններից: Նրանք առաջատար գիտնականներին, հանրային ու մասնավոր կազմակերպություններին աստիճանաբար ավելի լայնորեն են ներգրավում իրենց ընդհանուր ժողովներին և դժվարություններ ապրող ժողովրդավարություններին իրենց փորձառությունն ու տեխնիկական խորհրդատվությունն են փոխանցում:

[3] Ստեփան, 2011, 224:

խանությունների հանդեպ անվստահության ալիք բարձրացնել[1]: Այդ առումով Հայաստանը ևս բացառություն չէ, և 2018թ. հեղափոխությունից հետո, երբ երկիրը բարելավեց իր դիրքերը ժողովրդավար պետությունների ինդեքսում[2], հետպատերազմյան և համավարակի ճգնաժամային իրավիճակում այն կրկին անկում ապրեց[3]:

Մերօրյա էլեկտրոնային գործիքները կարևոր են քաղաքացիների մասնակցության ցուցանիշի բարձրացման համատեսքտում: Դրանք համարվում են արդյունավետ և հարմարավետ միջոցներ՝ ցանկացած պահի ցանկացած վայրում յուրաքանչյուրի կողմից անհրաժեշտ տեղեկատվություն ստանալու համար[4]: Պատահական չէ, որ գլոբալ ազատության մեջ՝ որպես առանցքային փոփոխական, դուրս է բերվում նաև համացանցային ազատությունը, որն իր հերթին չափվում է երեք հիմնական գործոնով՝ «հասանելիության խոչընդոտներ», «բովանդակության սահմանափակումներ», «օգտատերերի իրավունքների խախտումներ»[5]:

Ժողովրդավարությունն ի վիճակի է լավագույնս կիրառելու կոլեկտիվ բանականությունը[6], սակայն այն այսօր վտանգված է, քանի որ խնդիրներ լուծելու մեր կարողություններին խանգարում է խոչընդոտների լայն շրջանակ, և մենք դեռ շատ հեռու ենք իրավամբ ժողովրդավար քաղաքական համակարգի իդեալից, այն է՝ խթանել «որոշումների վրա ազդելու հավասար հնարավորությունը» բոլորի համար[7]: Այսօր նկատվում է ժողովրդավարության նկատմամբ վստահության անկում թե՛ քաղաքացիների, թե՛ որոշումներ կայացնողների, թե՛ գիտական հանրույթի շրջանում: Քաղաքացիների և քաղաքական որոշումների կայացնող մարմինների միջև սեպն օր օրի ավելի է խորանում, իսկ «ժողովրդավարություն» տերմինը դարձել է տոսկ շահարկման առարկա: Այսօր անհրաժեշտ է աջակցել իրական ժողովրդավարության կայացմանն անաչառ և օբյեկտիվ եղանակով: Այս նպատակով 2000-ականների սկզբներից որպես լուծում սկսեց առաջարկվել էլեկտրոնային ժողովրդավարության ինստիտուտի կայացումը՝ որպես առավել օբյեկտիվ և ավելի ընդգրկուն մասնակցություն ապահովող մեխանիզմ:

---

[1] Narsee, 2021 https://carnegieeurope.eu/2021/01/27/europeans-right-to-protest-under-threat-pub-83735 (last seen on 08/12/2021).

[2] 111-րդ տեղից հայտնվեց 103-րդ տեղում:

[3] Ժողովրդավարության ցուցանիշը 3,00-ից նվազեց 2,96-ի. https://freedomhouse.org/country/armenia/nations-transit/2021 վերջին անգամ դիտված՝ 08/12/2021

[4] Ըստ Հեռահաղորդակցության միջազգային միության (International Telecommunication Union (ITU)- ՄԱԿ-ի հատուկ գործակալություն) վիճակագրության՝ 2021 թ. տարեվերջի դրությամբ համացանցային օգտատերերի թիվը 4,9 միլիարդ է, որը կազմում է աշխարհի ողջ բնակչության 63%-ը: https://www.itu.int/en/ITU-D/Statistics/Pages/stat/default.aspx վերջին անգամ դիտված՝ 08/12/2021

[5] Ըստ այս չափանիշների՝ Հայաստանի պարագայում համացանցային ազատության ցուցանիշը 100-ից 71 է (համարվում է ազատ), որտեղ հասանելիության խոչընդոտները գնահատվում են 25-ից 19, բովանդակության սահմանափակումները՝ 35-ից 26, օգտատերերի իրավունքների խախտումները՝ 40-ից 26. առավել մանրամասն՝ https://freedomhouse.org/country/armenia/freedom-net/2021#footnote1_8ib97pz (վերջին անգամ դիտված՝ 08/12/2021)

[6] Landemore, 2017.

[7] Dahl, 2015.

ժողովրդավարության վրա մեծ ազդեցություն ունեցավ տեղեկատվական և հաղորդակցական թվային տեխնոլոգիաների արագ զարգացումն ամբողջ աշխարհում: Չնայած նոր հարթակներ տրամադրվեցին քաղաքացիական մոբիլիզացիայի, լուրերի, դրանց մեկնաբանությունների և հանրային կարծիքի արագընթաց տարածման համար, բայց այդ նույն հարթակները նաև ենթակա են գրաքննության, հսկողության և հակաժողովրդավարական ուժերի կողմից շահագործման:

Քանի որ արդի շրջանում փորձ է կատարվում թվային տեխնոլոգիաները համադրել մարդու կենսագործունեության բացառապես բոլոր ոլորտների հետ, քաղաքագետներն ու պետական կառավարման ինստիտուտները սկսել են ավելի խորը քննարկել և կյանքի կոչել «համալրված ժողովրդավարության»[1] գաղափարը: Ժողովրդավարության կայացումը հնարավոր է ապահովել կոլեկտիվ հետազոտության, կոլեկտիվ քննարկումների, կոլեկտիվ մտածողության և հաղորդակցման տեխնոլոգիաների համադրման միջոցով՝ երկարաժամկետ հեռանկարներում առանցքային հասարակական, սոցիալ-քաղաքական և այլ հիմնախնդիրների արդյունավետ կոլեկտիվ քննարկումը խթանելու համար[2]:

ԿՏԱՆԳՎԱԾ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԹՎԱՅԻՆ ԼՈՒԾՈՒՄՆԵՐ

Կտանգված ժողովրդավարության և դրա նկատմամբ անվստահության խնդիրը կարելի է լուծել՝ առավել արդյունավետ օգտագործելով կոլեկտիվ գիտակցությունը, քանի որ դա հնարավորություն կտա բարձրացնելու ժողովրդավարական գործընթացների լեգիտիմությունն ու արդյունավետությունը: Չնայած այսօր ժողովրդավարության ամենատարածված արտահայտչաձևը ներկայացուցչական ժողովրդավարությունն է, այնուամենայնիվ, մշակված մոտեցումները չեն մեծացնում կոլեկտիվ գիտակցության պոտենցիալը կարևորագույն հիմնախնդիրների լուծման առնչությամբ առավել արդյունավետ որոշումներ կայացնելու գործում առնվազն վեց պատճառով:

*1. **Կոլեկտիվ գիտակցության նկատմամբ անվստահություն**. քաղաքական որոշումներ կայացնողների և քաղաքացիական հասարակության միջև հաղորդակցությունն այդպես էլ մնում է անհավասարակշված ու անարդյունավետ: Պետական կառավարման մարմինները հազվադեպ են բարձրացնում «մասնակցության սանդղակը»: Խորհրդակցությունները հաճախ քիչ առնչություն ունեն որոշումների կայացման պաշտոնական գործընթացի հետ: Պետական պաշտոնյաները կարծում են, որ շահագրգիռ կողմերին պատշաճ կերպով հրավիրելու ուղղակի ծախսերը չափազանց բարձր են, այդ իսկ պատճառով էլ չեն կատարում բավականաչափ ներդրումներ որակյալ մասնակցային գործընթացների կազմակերպման համար:*

*2. **Հատվածային զրույցներ.** ողջ քաղաքական ցիկլի ընթացքում ներգրավվում են մասնակիցների նեղ և մասնատված շրջանակներ: Այսօր դիսկուրսն ընթանում է սոսկ նեղ քաղաքական գործընթացների շուրջ՝ ընտրություններ, կոնկրետ օրակարգով քաղաքական բանավեճեր, քաղաքական կոնկրետ գործիչներ և այլն: Իսկ այս նեղ քաղաքական դիսկուրսն ընթանում է որոշ քաղաքական, լոբբիստական նեղ խմբերի ու*

---

[1] “Augmented Democracy”- համալրված ժողովրդավարություն՝ համալրված թվային (էլեկտրոնային) բաղադրատարրերով:

[2] Boucher, 2018.

անձանց շրջանակներում: Կենտրոնանալով նեղ քաղաքական հատվածային գործընթացների վրա՝ համակարգային բարեփոխումներ կատարելու անհրաժեշտ ջանքեր չեն գործադրվում:

*3. **Չփոխկապակցված տեխնոլոգիաներ.** առանձին գործիքներ հատվածային են դիմակայում մեծ համայնքները միավորելու մարտահրավերներին: Դրանք մասնատված են շատ տարբեր տեսանկյուններից՝ աշխարհագրական (համայնքային, ազգային, միջազգային մակարդակներով), հիմնահարցերի առաջադրման և հանրային բանավեճի ողջ կյանքի շրջապտույտի տեսանկյունից (հարցի բնույթը ձևավորելուց սկսած, վերջացրած առաջնահերթությունների սահմանմամբ, այլընտրանքային լուծումների մշակմամբ, դրանց փորձարկմամբ, ընդունմամբ և այլն): Այս թերությունները չեզոքացնելու համար նախատեսված տեխնոլոգիաները միմյանց չեն փոխլրացնում:*

*4. **Հակառակ քաղաքական բևեռների անբավարար ինտեգրում.** անհրաժեշտ է խթանել քաղաքական հակառակ բևեռների համագործակցության գործընթացը. Այսինքն՝ կարիք կա դուրս գալու լոբբիստական խմբերի, քաղաքական կուսակցությունների, «վստահելի» փորձագետների և այլ համապատասխան շահագրգիռ կողմերի շրջանակներից և նրանց միավորել գործընկերության համատեքստում: Թե որքանով են քաղաքական բևեռները պատրաստ նման նոր իրողության, դժվար է ասել, քանի որ այստեղ նկատվում է նաև վերը նշված երկրորդ կետի հիմնախնդիրը՝ նեղ կուսակցական շահեր, հատվածային հաղորդակցություն և այլն:*

*5. **Քաղաքական երկխոսությունից մասնակիցներին դուրս թողնելը.** քաղաքացիներին սովորաբար հարցնում են, թե ինչ են մտածում այլոց կողմից կայացված որոշումների մասին, սակայն հազվադեպ են առաջարկում նրանց համատեղ մշակել նոր լուծումներ: Հասարակության հետ խորհրդատվությունները հաճախ ձևական բնույթ են կրում, և որոշումներ կայացնողներն իրականում հազվադեպ են ձգտում ողջ հանրության կարողությունները գործի դնել քաղաքական շրջապտույտի տարբեր փուլերում գաղափարների ձևավորման համար:*

*6. **Կայացվող որոշումների համատեղ մշակման ձևական բնույթը.** քննարկումը մասնակիցներից հաճախ չի պահանջում համատեղ մշակել նոր որոշումներ, դրա համար էլ սովորաբար ամբողջությամբ չի ուսումնասիրվում բնակչության համապատասխան խմբերի կոգնիտիվ բազմազանությունը: Քաղված դասերը, թե ինչպես նպաստել այլ ոլորտներում ստեղծագործականության ու նորարարության խթանմանը, հանրային ոլորտում կիրառվում են միայն աննշան, իսկ որակի ապահովման շատ մեթոդաբանություններ թվում են բավականին թանկարժեք: Իրականում անհրաժեշտ է մտածել, թե ինչպես նվազեցնել ծախսերը և բարձրացնել կայացվող որոշումների արդյունավետությունը:*

Իդեալական պայմաններում քաղաքական շրջապտույտը պետք է ներառի տվյալ համայնքի կամ հասարակության բոլոր շահագրգիռ կողմերին սույն բոլոր յոթ փուլերում՝ ա) խնդրի սահմանում, բ) գաղափարականացում, գ) ընտրություն, դ)բանավեճ, ե) ընդունում, զ) փորձարկում, է) մասշտաբայնացում: Դրանք անհրաժեշտ են համայնքի առջև ծառացած ցանկացած մարտահրավերի հնարավոր լավագույն լուծումը ստանալու համար:

Առցանց թվային գործիքների կիրառումն ապացուցել է իր արժեքավոր լինելը

մասնակցային ժողովրդավարության ապահովման համար: Էլեկտրոնային կամ առցանց ժողովրդավարությունը[1] վերաբերում է այն գործընթացներին ու կառույցներին, որոնց միջև տեղի է ունենում էլեկտրոնային համագործակցություն: Այն ներառում է առցանց քննարկումներ (առցանց մասնակցություն), տեղեկատվության հասանելիություն, քվեարկողների առցանց գրանցում, առցանց քվեարկություն, որը հայտնի է e-քվեարկություն (electronic՝ էլեկտրոնային) անվամբ: Առցանց համակարգերը որոշումների կայացման գործընթացում էական դեր են խաղում. նրանք արդյունավետորեն միավորում են բոլոր շահագրգիռ կողմերին՝ թե՛ որոշումներ կայացնողներին, թե՛ իշխանության մարմիններին, թե՛ քաղաքացիական հասարակությանը, թե՛ փորձագետներին՝ էական խնդիրների լուծման, լուծումների մշակման և դրանց իրականացման օժանդակության համար: Չնայած էլեկտրոնային ժողովրդավարության տարատեսակ գործիքները վաղուց ստեղծվել և կիրառվում են տարբեր պետություններում[2], այնուամենայնիվ, դրանք դեռևս չեն ստանում լայն տարածում և սահմանափակվում են մի քանի հազար մասնակիցներով ու քվեներով:

Մասնակցային ժողովրդավարության տեսաբաններ Զ. Վոլֆը, Ֆ. Գրինը, Բ. Բարբերը, Կ. Մաքֆերսոնը և այլոք գտնում են, որ դեռևս չի ստեղծվել քաղաքական իշխանության ամբողջական ժողովրդավարական համակարգ և անհրաժեշտ է մշակել արդյունավետ միջոցներ՝ մարդկանց մասնակցությունը քաղաքական գործընթացներին ապահովելու համար: Ըստ այս տեսաբանների՝ կարելի է խուսափել «ազատության պարադոքսից», երբ մեծամասնությունը կարող է ընտրել բռնակալի կամ ինքը դառնա նոր բռնակալ: Էլիտայի բռնակալությունը կդառնա անհնար լավ տեղեկացված հասարակությունում, երբ վերջինս կկարողանա ընտրությունների միջոցով իրականացնել ժողովրդավարական վերահսկողություն[3]: Սակայն մինչ օրս անգամ տեղեկատվական հասարակության համատեքստում, երբ թվում է, թե տեղեկացված լինելու մեթոդներն առավել հասանելի են քաղաքացիներին, այնուամենայնիվ, ակտուալ հիմնախնդիրներ են «լավ տեղեկացված» լինելը, ավելին՝ ապատեղեկատվության լայն տարածումը, մանիպուլյատիվ մեթոդների կիրառումն ու տեղեկատվական աղբյուրների նկատմամբ վերահսկողությունը:

Հետարդյունաբերական հասարակարգում թվային մեդիակրատիան և քվանտային քաղաքականությունը հիմնավորում են կառավարման ապամարդկայնացումը, որը, որպես քաղաքական որոշումների կայացման մեթոդ, հիմնվում է մաթեմատիկական ալգորիթմների վրա[4]՝ զերծ մնալով մարդուն բնորոշ հույզերից ու զգացմունքներից: Ապամարդկայնացման մեխանիզմների հիմքը կազմում են թվային տեխնոլոգիաները, որոնք թույլ են տալիս քաղաքական դասակարգին վերացարկվել մարգինալ խմբերի, սոցիալական խնդրահարույց կառուցվածքների իրական պահանջմունքներից: Պե-

---

[1] Кириленко, Алексеев, 2019, 19-31.

[2] «Դիսայդ Մադրիդ» “Decide Madrid”- Մադրիդի քաղաքային խորհրդի քաղաքացիների մասնակցության հարթակ, Չիլիի սենատի որոշումների ընդունմանը նպաստող թվային հարթակը՝ «Սենադոր Վիրտուալ»“Senador Virtual” project, www.e-draft.am ՀՀ իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական կայքը և այլն:

[3] Պողոսյան, Միրումյան, Բաբաջանյան, Աստվածատուրով, 2004, 251-252

[4] Rainie, Anderson, 2017 https://www.pewresearch.org/internet/2017/02/08/code-dependent-pros-and-cons-of-the-algorithm-age/ (վերջին անգամ դիտված՝ 19.01.2021)

տական և կորպորատիվ կառավարման ապահումանիզացման արդյունքում հասարակության շարքային մարդու շահերն ու պահանջմունքներն արհեստական բանականության վերահսկողության տակ են դրվում, և էլեկտրոնային ժողովրդավարությունը որոշակիորեն դառնում է իրավաքաղաքական կարգավորման մեխանիզմի մասը: Եթե հիմնվենք այն փաստի վրա, որ ժողովրդավարության համար կարևոր նշանակություն ունեն ընդդիմությունն ու մասնակցությունը, ապա մի դեպքում թվային տիրույթը ընդդիմությանը մեծ հնարավորություններ է տալիս սեփական քաղաքական ծրագրի արտահայտման համար և հեշտացնում է ընտրողների հասանելիությունը քաղաքական քննարկմանն ու քվեարկությանը, իսկ մյուս կողմից՝ բարդ տեղեկատվական տեխնոլոգիաների ներդման արդյունքում առաջանում է թվային անջրպետ քաղաքական դասի և ընտրազանգվածի միջև:

Որոշ տեսաբաններ թվային ալգորիթմների օգտագործումը կապում են ոչ թե ժողովրդավարության թվայնացման, այլ՝ նոր բռնապետության և տոտալ վերահսկողության սահմանման հետ, քանի որ թվային տեխնոլոգիաների կիրառումը ոչ թե ամրապնդում է լիբերալ ժողովրդավարական քաղաքականությունը, այլև կարող է ծառայել ոչ լիբերալ արժեքների ու քաղաքականության լեգիտիմացմանը[1]:

«ՀԱՄԱԼՐՎԱԾ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅԱՆ» ԳԱՂԱՓԱՐԸ ՄԵԾ ՏՎՅԱԼՆԵՐԻ ԿԻՐԱՌՄԱՆ ՀԻՄՔՈՎ

Ժողովրդի իշխանության տրամաբանությունն էլեկտրոնային ժողովրդավարության դեպքում անխուսափելիորեն ենթարկվում է մեծ տվյալների օրենքներին[2]: Մեծ տվյալների մշակման և կիրառման սկզբունքները հակասում են մասնավոր կյանքի անձեռնմխելիության, անձնական տվյալների պաշտպանության և այլ գաղտնի տեղեկության չլուսաբանման մասին օրենսդրական կարգավորումներին[3]:

Եվրոպական գիտնականներ Ջենս Հոֆֆը և Քրիստիան Էլլինգ Շիլը նշում են, որ թվային ժողովրդավարությունը կենտրոնանում է այն բանի վրա, թե ինչպես են համացանցի կոնկրետ հնարավորությունները ներթափանցում որոշակի քաղաքական և/կամ կառավարչական պրակտիկաներ և թե ինչպես են վերջիններս ստեղծվում դիսկուրսների, մասնակիցների և տեխնոլոգիաների փոխազդեցության միջոցով[4]: Այսպիսով, ակնհայտ է, որ էլեկտրոնային ժողովրդավարության պարագայում սոսկ ընտրատեղամասերում տվյալների մշակման մեքենայացմանը հավասարեցման ձգտումներն ամբողջովին չեն արտահայտում ժողովրդավարության և թվային տեխնոլոգիաների միջև կապերը և իրական էությունը: Դարասկզբին, միգուցե, լայնորեն ընդունված էր, որ համացանցը քաղաքական հաղորդակցության նոր միջոց է, որն ի վիճակի է լավացնել քաղաքական երկխոսության որակը[5], սակայն քաղաքական համատեքստում հենց ցանցային տեխնոլոգիաներն էին, որ ստեղծեցին թվային անհավասարություն, որն արտահայտվում է տեղեկատվական մշակույթի ցածր մակարդակով և սպառնում է իրա-

[1] Johnson, 2007, 85–112.
[2] Hollis, 2017, 108–118, Janssen, Van den Hoven, 2015, 363–368.
[3] Boehme-Nebler, 2016, 222–229.
[4] Hoff, Scheele, 2014, 241–267.
[5] Быков, 2005, 69–79.

վական պետությանը[1]:

Քանի որ քաղաքական բազմաշերտ գործընթացների լիովին թվայնացումը դեռևս հնարավոր չէ, հետևաբար համալրված ժողովրդավարության կիրառումն առավել նպատակահարմար է դառնում: Համալրված ժողովրդավարության գաղափարը թվային կնկնօրինակների կիրառման մեջ է, որի արդյունքում ավելի շատ թվով մարդիկ իրենց ուղղակի մասնակցությունը կցուցաբերեն ժողովրդավարական հսկայածավալ որոշումների կայացման գործընթացում: Թվային կրկնօրինակը կամ ավատարը, ասել է թե՝ ծրագրային ապահովման գործակալը, վիրտուալ իրականությունում կապահովի անձի անհատականացված վիրտուալ ներկայությունը:

Միլիոնավոր մարդիկ ամեն օր շփվում են թվային կրկնօրինակների պարզ տարբերակների հետ: Օրինակ՝ կինոնկարների և երաժշտական կայքերը, ինչպիսիք են՝ Նեթֆլիքսը (Netflix), Հուլուն (Hulu), Պանդորան (Pandora) կամ Սփոթիֆայը (Spotify), հնարավորություն են տալիս օգտատերերին ստեղծելու իրենց վիրտուալ ավատարները, որոնց միջոցով նրանք կարող են ընտրել հաջորդ երգը կամ ֆիլմը: Այդ նույն ալգորիթմով են աշխատում այսօր շատ այլ հարթակներ, որոնք իրենց օգտատերերի գործողությունների և նախասիրությունների մասին առավելագույն տեղեկություններ ունենալով, առաջարկում են այս կամ այն ծառայությունը, ապրանքը, հետևաբար կարող են առաջարկել նաև քաղաքական գործիչներին ու վերջիններիս հայացքները, օգտատերերին հետաքրքրող ու մտահոգող թեմաներով օրինագծերը և այլն:

Համարված ժողովրդավարության գաղափարը քաղաքացիներին խրախուսելու մեջ է՝ ստեղծելու անհատականացված արհեստական բանականության ներկայացուցիչներ, առավելագույնս նպաստելով նրանց ներգրավմանը բազմաթիվ ժողովրդավարական գործընթացներին: Թվում է, թե իդեալական է ասված, և այն առավել քան օբյեկտիվորեն կարտահայտի իրականությունն ու կնպաստի ժողովրդավարության կայացմանը, սակայն հարցը նրանում է, թե արդյոք այն չի դառնա ընդամենն օգտատերերին մանիպուլացնելու նոր ավելի արդյունավետ մեխանիզմ, քանի որ թվային կրկնօրինակների կողմից առավել հիմնավոր քաղաքական որոշումների կայացման համար ալգորիթմներին պետք կգան անձնական կյանքին վերաբերող առավել զգայուն բազմաշերտ տվյալներ:

Դարաշրջանի տեխնոկրատական գաղափարախոսներն, այնուամենայնիվ, դրական են գնահատում համալրված ժողովրդավարության ներդրման փորձարկումները: Ըստ նրանց հիմնավորումների՝ համալրված ժողովրդավարության համակարգի կարևորագույն գործառույթներից մեկը կանխատեսումն է՝ հիմնված հսկայածավալ օբյեկտիվորեն ստացված տվյալների (մեծ տվյալների) վրա: Համալրված ժողովրդավարության պայմաններում հնարավոր կլինի կանխատեսել, թե ինչպես օգտատեր-քաղաքացիները կքվեարկեն օրենսդիրում կամ գործադիրում քննարկվող որևէ նախագծի օգտին. սա առավել քան կանխատեսելի, հետևաբար կառավարելի կդարձնի քաղաքացիների վարքը:

Նմանօրինակ կանխատեսումների համար համալրված ժողովրդավարության համակարգին անհրաժեշտ կլինեն մեծաքանակ տվյալներ և դրանց խորքային վերլուծությունները: Նախատեսվում է, որ մարդիկ, որոնք մասնակցում են համալրված ժո-

[1] Быков, Халл, 2011, 151–163.

ղովրդավարության համակարգի գործառնությանը, կամավոր հիմունքներով կտրամադրեն տեղեկություններ[1], որոնք կարող են ներառել տվյալների ակտիվ և պասիվ տեսակները: Իհարկե, ըստ այս համակարգի մշակողների, այդ նույն օգտատերերը ցանկացած պահի իրենց իսկ տրամադրած տեղեկությունները հետ կանչելու կամ փոփոխելու հնարավորություն կունենան: «Ակտիվ տվյալները» հարցումներն ու հետազոտություններն են, և որն ավելի կարևոր է, այն արձագանքը, որ մարդիկ ուղղակիորեն կփոխանցեն իրենց թվային կրկնօրինակներին: «Պասիվ տվյալները» կներառեն տեղեկություններ, որոնք գեներացվում են այլ նպատակներով, օրինակ՝ օգտատերերի օնլայն ընթերցանության նախընտրությունները, գնման վարքագծերը կամ սոցիալական մեդիա ակտիվությունը և այլն: Այդուհանդերձ թվային կրկնօրինակը կհամադրի օգտատիրոջ տվյալներն օրենսդրական նախագծի հետ՝ կանխատեսելու, թե ինչպես տվյալ օգտատերը կքվեարկեր դրա օգտին: Ի դեպ, այն ալգորիթմը, որն օգտատերը կնախընտրի կանխատեսման համար, նա կարող է ներբեռնել ալգորիթմների բաց թվային շուկայից՝ հնարավորություն ունենալով այն փոխարինելու ցանկացած ժամանակ: Այսպիսի ալգորիթմները կարող են կանխատեսել շատ ավելի նուրբ հարցեր, թե օգտատեր-քաղաքացիները տվյալ նախագծի որ մասերի հետ են ավելի հակված համաձայնվել կամ տարաձայնություններ ունենալ, կամ որևէ օգտատիրոջ մասին տվյալների ո՞ր բաղադրիչները խթանեցին արհեստական բանականությանը՝ առաջարկելու հենց այդ որոշումը: Ենթադրվում է, որ այդպիսի որոշումները պիտի լինեն գաղտնի և տեսանելի միայն տվյալ օգտատիրոջը, չնայած որ դրանք հասանելի կլինեն նաև ալգորիթմներին, որոնք հնարավորինս շատ տվյալներ ունեն օգտատերերի մասին և կարող են վերլուծել նրանց քայլերն ու նախընտրությունները:

Համալրված ժողովրդավարության համակարգը կարող է օգտատերերին տալ այնպիսի տեղեկություններ, ինչպիսիք են՝ տվյալ նախագծի աջակիցների աշխարհագրական բաշխվածությունը, մոտավոր հայտնիությունը, ճշգրտությունը և թվային շուկայում ալգորիթմների կանխակալության միջին գնահատականը:

Չնայած ներկայիս տեխնոլոգիաները դեռ ունակ չեն ստեղծելու բարդ թվային կրկնօրինակներ, այնուամենայնիվ, մոտ ապագայում հնարավոր կլինի համադրել քաղաքացիների նախասիրություններն իրավական փաստաթղթերի հետ և կանխատեսելի դարձնել քաղաքական որոշումների նկատմամբ քաղաքացիների լոյալության աստիճանը, սակայն միայն մեծ տվյալների խորքային բազմաչափ վերլուծության ու համադրման արդյունքում: Իսկ որպեսզի ստեղծվեն այդպիսի համակարգեր, պետք է մտածել այն մասին, թե ինչպես բարելավել իրավական տեքստերի թվային պատկերացումները:

Համալրված ժողովրդավարության փորձարարական համակարգերն առայժմ ոչ պաշտոնական են, որը նշանակում է, որ թվային կրկնօրինակի կայացրած որոշումները չպետք է պարտադրված լինեն և դեռևս պաշտոնական քաղաքականության հետ որևէ էական առնչություն չեն կարող ունենալ: Համալրված ժողովրդավարության համակարգի ներդրման առաջին լուրջ և էական խնդիրներից է տվյալների գաղտնիության քաղաքականությունը: Այնպիսի խոշոր հարթակներ, ինչպիսիք են՝ սոցիալական հսկա մեդիա հարթակները, կենտրոնացնում են տվյալների մեծ ծավալներ, չնայած

[1] Piana, 2021, 37-50

դրանք համալրված ժողովրդավարության համակարգը նախագծելու միակ միջոցը չեն:

Համալրված ժողովրդավարության համակարգի կայացման համար նախընտրելի է օգտագործել ոչ թե մենաշնորհված հարթակներ, օրինակ՝ ինչպիսին է այսօր «Մետան» (Meta)[1], այլ այնպիսիք, որոնք բնորոշ էին համաշխարհային սարդոստայնի վաղ շրջանին: Ըստ այդմ՝ յուրաքանչյուր օգտատեր իր տվյալները կարող է պահել իր «անձնական տվյալների պահոցում» կամ «տվյալների մոդուլում»: Տվյալները կարող են պահպանվել նման ծառայության բազմաթիվ «ամպային մատակարարներից» որևէ մեկում կամ անձնական համակարգչի մեջ: Սա, ավելի շուտ, նման է էլեկտրոնային փոստի գաղափարին: Ի տարբերություն սոցիալական մեդիայի, որտեղ որոշ մարդիկ վերահսկողություն ունեն ամբողջ հարթակի նկատմամբ, էլփոստի ծառայությունները մատուցվում են մեծ թվով ընկերությունների, համալսարանների և կազմակերպությունների կողմից, հետևաբար՝ էլփոստի պահոցներն առավել մասնատված են, և հավանականությունը, որ օգտատերերի մեծ տվյալները գեներացվելով հասանելի կլինեն սահմանափակ թվով մարդկանց, ավելի թուլանում է: Կանխատեսումներ կատարող ալգորիթմները ևս մեկ միասնական հարթակից չեն և բաշխված են: Օգտատերերը կարող են ընտրել, թե որ ալգորիթմներից օգտվել՝ հիմնվելով այն բանի վրա, թե ինչպես են գնահատված այս կամ այն ալգորիթմի կանխատեսումային կարողությունները, ճշգրտությունը, անկողմնակալությունը, որքանով են վստահելի ալգորիթմի ստեղծողները և այլ նախապայմաններ: Այս ապակենտրոնացված մոդելը կարող է օգնել լուծելու տվյալների համակենտրոնացման խնդիրը, չնայած հսկայական հարթակներն ամպային մատակարարներով փոխարինելու մեթոդի կիրառումն էլ ունի իր՝ թե՞ առավելությունները, թե՞ թերությունները: Մեծագույն առավելությունը տվյալների ապակենտրոնացումն է և բաշխվածությունը, որը թույլ է տալիս մեղմել տվյալների գաղտնիության ու անձեռնմխելիության խախտումը, խուսափել մենաշնորհներից, ինչը բնորոշ է խոշոր հարթակներում տեղեկությունների պահպանմանը: Իսկ թերությունը բխում է հենց ապակենտրոնացված լինելուց, որոնց պարագայում շատ ավելի դժվար է իրական ժամանակում թարմացնել, համադրել ու վերլուծել տվյալները: Իսկ երբ խոսքը գնում է ալգորիթմների մեքենայական ուսուցման մասին, շատ ավելի հարմար է, երբ տվյալները կենտրոնացված են մեկ միասնական հարթակում:

Խոսելով համալրված ժողովրդավարությանն անցում կատարելու հնարավորությունների կամ անհրաժեշտության մասին՝ նախ և առաջ պետք է պատասխանել այն հարցերին՝ արդյոք ինչի՞ համար են պետք արհեստական բանականությամբ օժտված կենսօրինակները, արդյոք քաղաքացիները չե՞ն կարող քվեարկել առանց օգտագործելու արհեստական բանականությունը, և վերջապես, ինչպե՞ս կազդի այս գործընթացը ժողովրդավարության բարելավման և կատարելագործման առումով:

Համալրված ժողովրդավարության համակարգն, ըստ էության, պետք է օգնի խթանելու և դրական բանավեճեր ձևավորելու քաղաքական որոշումների կայացման

[1] Meta- “Metaverse”- մեգակորպորացիա, որը միավորում է Ֆեյսբուք (Facebook), Մեսենջեր (Messenger), Վոթսափ (WhatsApp), Ինստագրամ (Instagram) և Օկուլուս (Oculus) սոցիալական հաղորդակցման հարթակները՝ մարտահրավեր նետելով նոր որակի սոցիալական հաղորդակցմանը և սահմանելով դրա էվոլյուցիոն հաջորդ (վիրտուալ, համալրված) փուլը. https://www.meta.com/

գործընթացում: Օրինակ՝ եթե որևէ օրենսդրական նախագծի շուրջ ստացվում է մի պատկեր, որտեղ նախագիծն արժանանում է 30% աջակցության, մերժվում՝ 25%-ի կողմից, և 45%-ը ձեռնպահ են քվեարկում, նշանակում է նախագիծը բավարար չափով լավ մշակված չէ և դեռ պետք է աշխատանք տարվի դրա մասով, որպեսզի առավելագույն կողմ ձայներ ստանա: Համակարգը նաև թույլ է տալիս կատարել մի շարք փորձարկումներ՝ մինչ այս կամ այն կենսական հարցի շուրջ վերջնական որոշման կայացումը:

Համալրված ժողովրդավարության խնդիրներից մեկն էլ այն է, որ քաղաքացիները դեռ պատրաստ չեն կայացնելու համալիր քաղաքական որոշումներ: Դա գալիս է գիտելիքի պակասից, տեղեկացված լինելու աստիճանից, այն աղբյուրներից, որտեղից ստացվում են տեղեկությունները, քաղաքական մանիպուլյացիոն մեխանիզմներից և այլն:

Չնայած այն մտքին, որ դեռ պետությունները պատրաստ չեն համալրված ժողովրդավարության ներդրմանը, այնուամենայնիվ, մի օր այն իրականություն կդառնա այնպես, ինչպես այսօր կրիպտոարժույթները և շատ ու շատ թվային տեխնոլոգիաներ:

Համալրված ժողովրդավարության մոտեցումը չի հավակնում լինել բոլոր հարցերի միանշանակ լուծում, սակայն այն առավել հիմնավոր կպատասխանի այն հարցերին, որոնք պահանջում են տեխնիկական փորձաքննության համադրություն, էթիկական քննարկումներ և երկարաժամկետ տեսլականի ռազմավարական պլանավորում: Այն կարող է ներդրվել կառավարման տարբեր հարթություններում՝ համայնքային, քաղաքային, մարզային, պետական միջպետական միավորումների մակարդակով, և լավագույնս պատասխանել այն հարցերին, որոնք առավել հեռահար նշանակության են:

Համալրված ժողովրդավարության կիրառման ժամանակ մեծագույն հարցը, թերևս, արհեստական բանականության կիրառման էթիկան[1] է, որը դեռ ամբողջությամբ հանգուցալուծված չէ: Այս առումով հիմնականում մտահոգված են արևմտյան պետությունները, քանի որ ժողովրդավարության ինստիտուտների կայացմանը զուգընթաց բախվում են մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մի շարք հիմնախնդիրների հետ: Ի հակադրություն սրան, օրինակ՝ Արևելքում (հանձին՝ ունիտար սոցիալիստական Չինաստանի), այս հարցերով այդքան էլ չեն անհանգստանում, որտեղ հանրային շահը գերադասում են անհատի իրավունքներից ու ազատություններից: Այսպես օրինակ՝ չինական միլիոնանոց քաղաքներում այսօր արդեն իսկ գործում են իրական ժամանակում ստացվող և վերլուծվող մեծ տվյալների վրա հիմնված «Հսկողության կենտրոններ[2]», որտեղ ոչ մի բնակիչ չի կարող դուրս մնալ վերահսկողությունից[20] : Ողջ տեղեկությունը հավաքվում է քաղաքային տեղեկատվական կենտրոններում և տնօրինվում իշխանությունների կողմից:

Եզրակացություն

Թույլ արհեստական բանականության աշխարհում բարձր տեխնոլոգիաները հիմ-

---

[1] Dignum, 2018, https://doi.org/10.1007/s10676-018-9450-z

[2] Ի դեպ, չինական իշխանություններն անվանում են այդ կենտրոնները «Ուղեղ» և հեռահար ռազմավարական պլանավորման մեջ է մտնում այս բոլոր կենտրոնների միավորումը համապետական մակարդակով: Այս կենտրոնների աշխատակիցներն իրական ժամանակում հասանելիություն ունեն հարյուր հազարավոր տեսախցիկների և կարող են անգամ ուղղակիորեն ղեկավարել դրանք:

նականում օժանդակ են և ենթակա մարդկանց, հետևաբար՝ կարող են կիրառվել նրանց կողմից հատվածային և կողմնակալ եղանակով: Քաղաքական գործընթացներում բարձր տեխնոլոգիաների ներդրման ժամանակ, ինչպես էլ դրանք անվանենք, կարևոր է հաշվի առնել այն հանգամանքը, որ քաղաքական որոշումները մշտապես հասարակական բոլոր ոլորտների բարդ ու բազմաչափ փոխկապակցման արդյունք են, հետևաբար՝ պահանջում են բազմաչափ վերլուծություններ կատարելու ունակություն: Հետևաբար՝ կարևոր է զարգացնել ու ապավինել արհեստական ընդհանուր բանականությանը, որն ունակ կլինի կատարելու բազմաչափ և խորը վերլուծություններ և կայացնելու դրանց հիման վրա առավել ճշգրիտ որոշումներ: Դա ինչ-որ իմաստով կնշանակի քաղաքական ներկա ինստիտուտների և գործընթացների իսպառ փոխակերպում կամ կազմաքանդում: Ինչ վերաբերում է ժողովրդավարության նկատմամբ վստահության բարձրացմանը և թվային տեխնոլոգիաներով համալրմանը, նախ և առաջ ժողովրդավար պետությունները պետք է պատասխանեն այն հարցին՝ արդյո՞ք իշխանություններն ազնիվ են քաղաքացիների հետ, և մեծ տվյալների հենքով աշխատող նոր ալգորիթմները չե՞ն դառնալու դասական մանիպուլյատիվ մեխանիզմների թվային ավելի «խելացի» լուծումներ, և արդյո՞ք թվային համալրման փորձերը չեն նպաստելու «տոտալ վերահսկողության» լեգիտիմացմանը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Ալեքսանյան Ա. Արևմտյան ժողովրդավարությունների քաղաքական համակարգեր, Երևան, 2009, էջ 8:
2. Պողոսյան Վ., Միրումյան Կ., Բաբաջանյան Ա., Աստվածատուրով Ս., Քաղաքագիտություն. հանրագիտական բառարան, Երևան 2004, էջ 251-252:
3. Ստեփան Ա. «Վտանգված ժողովրդավարություններ», Երևան 2011 // Մադրիդյան երրորդ գլխավոր համաժողովի արդյունքների ժողովածու, էջ 224:
4. Быков И. А. «Электронная демократия» VS «электронное правительство»: концептуальное противостояние? Политическая экспертиза: ПОЛИТЭКС. 2005. Т. 1. № 3. С. 69–79.
5. Быков И. А., Халл Т. Э. Цифровое неравенство и политические предпочтения интернет-пользователей в России // Полис. Политические исследования. 2011. № 5. С. 151–163.
6. Кириленко В. П., Алексеев Г. В. Электронная демократия и гуманистические принципы. Управленческое консультирование. № 6. 2019. С. 19-31.
7. Международный пакт о правах человека. 217 (III) ООН: https://undocs.org/ru/A/RES/217(III) (последний визит 20.01.2022) (վերջին անգամ դիտված 18.11.2021 թ.)
8. Хворостов, А. (2020). "Что такое демократия и как её измерить?" ПОЛИС. Политические исследования. С.12.
9. Boucher S. “Augmented Democracy: How to maximise collective intelligence to solve pressing issues more effectively”. Policy Paper January 11, 2018.
10. Boehme-Neßler V. Privacy: A Matter of Democracy. Why democracy needs privacy and data protection in International Data Privacy Law // International Data Privacy Law 2016.

Vol. 6. Is. 3. P. 222–229.

11. Democracy: global issues. UN: https://www.un.org/ru/global-issues/democracy (վերջին անգամ դիտված 18.11.2021 թ.)
12. Dignum, V. Ethics in artificial intelligence: introduction to the special issue. Ethics Inf Technol 20, 1–3 (2018). https://doi.org/10.1007/s10676-018-9450-z
13. Freedom House. Nations In Transit 2021: Armenia. https://freedomhouse.org/country/armenia/nations-transit/2021 (last seen on 20.01.2022)
14. Freedom House. Freedom of the Net: Armenia. https://freedomhouse.org/country/armenia/freedom-net/2021
15. Hélène Landemore. Democratric Reason – Politics, Collective Intelligence and the Rule of the Many. Princeton University Press, 2017
16. Hoff J., Scheele C. E. Theoretical Approaches to Digital Services and Digital Democracy: The Merits of the Contextual New Medium Theory Model // Policy & Internet 2014. Vol. 6. Is. 3. P. 241–267.
17. Hollis L. Weapons of Maths Destruction: How big data increases inequality and threatens democracy. An interview with Cathy O'Neil // IPPR Progressive Review 2017. Vol. 24. Is. 2. P. 108–118.
18. Janssen M., Van den Hoven J. "Big and Open Linked Data (BOLD) in Government: A Challenge to Transparency and Privacy? Government Information Quarterly 2015. Vol. 32. Is. 4. P. 363–368.
19. Johnson J. A. The Illiberal Culture of E-Democracy // Journal of E-Government 2007. Vol. 3. Is. 4. P. 85–112.
20. Jun Liu, Hui Zhao. Privacy lost: Appropriating surveillance technology in China's fight against COVID-19. Business Horizons (2021) 64. P. 743-756.
21. Morsink Johannes. The Universal Declaration of Human Rights: Origins, Drafting, and Intent (1999). Pennsylvania Studies in Human Rights. University of Pennsylvania Press, 2000. ISBN 0812200411, ISBN 9780812200416. P. 396.
22. Narsee A. "Europeans' Right to Protest Under Threat": https://carnegieeurope.eu/2021/01/27/europeans-right-to-protest-under-threat-pub-83735 January 27, 2021 (վերջին անգամ դիտված՝ 08/12/2021)
23. Orphanides K. G. "How Tim Berners-Lee's Inrupt project plans to fix the web" Business, 2019 https://www.wired.co.uk/article/inrupt-tim-berners-lee (last seen on 20.01.2022)
24. Piana D. Augmented democracy: more open, less free? Rivista di Digital Politics. Vol. I, 1(2021) P. 37-50
25. Robert Dahl, On Democracy, 2d edition, Yale University Press, 2015
26. Rainie L., Anderson J. Code-Dependent: Pros and Cons of the Algorithm Age. Pew Research Center. February 8, 2017 https://www.pewresearch.org/internet/2017/02/08/code-dependent-pros-and-cons-of-the-algorithm-age/ (վերջին անգամ դիտված՝ 19.01.2022)
27. Statistics: International Telecommunication Union- UN specialized agency for information and communication technologies: https://www.itu.int/en/ITU-D/Statistics/Pages/stat/default.aspx (վերջին անգամ դիտված՝ 21/11/2021)

REFERENCES

1. Aleksanyan A. Arevmtyan jhoghovrdavarut'yunneri qaghaqakan hamakarger, Erevan, 2009, e'j. 8 [Aleksanyan A., Political Systems of Western Democracy, Yerevan, 2009] (Armenian)
2. Bykov I. A. «Jelektronnaja demokratija» VS «jelektronnoe pravitel'stvo»: konceptual'noe protivostojanie? Politicheskaja jekspertiza: POLITJeKS. 2005. T. 1. № 3. S. 69–79. [Bikov I. A., "Electronic Democracy" VS "Electronic Government" Conceptual Conflict? Political Expertise, St. Petersburg, 2005] (Russian)
3. Bykov I. A., Hall T. Je. Cifrovoe neravenstvo i politicheskie predpochtenija internet-pol'zovatelej v Rossii // Polis. Politicheskie issledovanija. 2011. № 5. S. 151–163. [Bikov I. A., Hall T. E., Digital Inequality and Political Preferences of Internet Users in Russia, Moscu, 2011] (Russian)
4. Hvorostov, A. Chto takoe demokratija i kak ejo izmerit'? POLIS. Politicheskie issledovanija. 2020, S.12. [Khvorostov A., What is democracy and hu to measure it?, Moscu, 2020] (Russian)
5. Kirilenko V. P., Alekseev G. V. Jelektronnaja demokratija i gumanisticheskie principy. Upravlencheskoe konsul'tirovanie. № 6. 2019. S. 19-31. [Kirilenko V. P., Alekseev G. V., Electronic Democracy and humanistic Principles: Management consulting, № 6. 2019] (Russian)
6. Mezhdunarodnyj pakt o pravah cheloveka. 217 (III) OON: [International Covenant on Human Rights. 217 (III) UN, last seen on 18.11.2021] (Russian)
7. Poghosyan V., Mirumyan K., Babajanyan A., Astvac'aturov S., Qaghaqagitut'yun. hanragitakan bar'aran, Erevan 2004, E'j. 251-252 [Poghosyan V., Mirumyan K, Babajanyan A. Astvatsaturov S., Political Sciences: Encyclopedical Dictionary, Yerevan 2004, PP. 251-252] (Armenian)
8. Step'an A. «Vtangvac' jhoghovrdavarut'yunner» // Madridyan errord glxavor hamajhoghovi ardyunqneri jhoghovac'u, Erevan 2011, e'j 224. [Stepan A., Democracies in Danger, Yerevan 2011, P. 224] (Armenian)

РЕЗЮМЕ

Возможности развития дополненной демократии в эпоху современных технологий

Жанна Арутюнян

соискатель Института философии, социологии и права НАН РА

Ереван, Армения

Ключевые слова: политические процессы, электронная демократия, искусственный интеллект, дополненная демократия, большие данные, цифровые технологии, политический прогноз, принятие решений, цифровое неравенство.

В данной статье обсуждаются тенденции цифровизации демократии в контексте развития высоких технологий, предпосылки для формирования электронной демократии и перехода в дополненную демократию в современное время. Делается попытка проанализировать трансформацию демократической системы в ближайшие годы, опасности и

угрозы, которые стоят за этой трансформацией, вопросы о том, как уменьшить их риски и последствия. Использование алгоритмов больших данных может привести к появлению более модернизированных «умных» механизмов манипулирования политическими процессами, что, в свою очередь, станет более серьезной угрозой для создания и становления демократических институтов.

Политические режимы, независимо от их природы, не только активно используют процесс цифровизации, но и пытаются использовать цифровые технологии в своих целях. Однако сегодня судьба демократической системы ставится под вопрос, и для этого нужно понять опасности и угрозы, стоящие за цифровизацией демократии, как уменьшить и смягчить их воздействие. Проблема недоверия к демократии может быть решена за счет более эффективного использования коллективного сознания, поскольку это повысит легитимность и эффективность демократических процессов.

Система дополненной демократии, по сути, должна способствовать стимулированию позитивных дебатов в процессе принятия политических решений. Также система позволит провести ряд тестов, прежде чем будет принято окончательное решение по тому или иному жизненно важному вопросу. Кроме этого, одной из важнейших функций дополненной демократии является прогнозирование, основанное на больших объемах объективно полученных данных (больших данных). В условиях дополненной демократии можно будет предсказать, как граждане-пользователи будут голосовать за любой законопроект, обсуждаемый в законодательной или исполнительной власти. Это сделает поведение граждан более чем предсказуемым и, следовательно, управляемым.

При внедрении высоких технологий в политические процессы, нужно учитывать тот факт, что политические решения всегда являются результатом сложных и многогранных взаимосвязей всех социальных сфер, поэтому требуют умения проводить многоаспектный анализ. Для этого нужно развивать и опираться на общий искусственный интеллект, который сможет делать многомерные «глубокие анализы», принимать на их основе более точные решения. В некотором смысле это будет означать полную трансформацию или разрушение нынешних политических институтов и процессов.

Что касается повышения уровня доверия в демократию и дополнению цифровыми технологиями, демократические страны сначала должны ответить на вопрос, честны ли власти со своими гражданами, и не будут ли попытки цифровизации политических процессов способствовать легитимации «тотального цифрового контроля»?

SUMMARY

Development Opportunities of Augmented Democracy in Modern Technological Era.

Zhanna Harutyunyan

National Academy of Sciences of RA, Institute of Philosophy, Sociology and Law, Ph.D.Student, Yerevan, Armenia

Keywords: Political processes, e-democracy, artificial intelligence (AI), augmented democracy, big data, digital technologies, political forcast, digital inequality, decision-making.

This article discusses the trends of digitalization of democracy in the context of the development of high technologies, the prerequisites for the formation of e-democracy and the

transition to augmented democracy in modern times. An attempt is made to analyze the transformation of the democratic system in the future, the dangers and threats that lie behind this transformation, the questions of how to reduce and mitigate their risks and consequences. The use of big data algorithms can lead to the emergence of more modernized "smart" mechanisms for manipulating political processes, which, in turn, will become a more serious threat to the creation and development of democratic institutions.

Political regimes, regardless of their nature, do not only actively use the digitalization process, but also try to use digital technologies for their own purposes. However, today the future of the democratic system is under threat, and for this it is necessary to understand the dangers behind the digitalization of democracy, how to reduce and mitigate their impact. The problem of distrust of democracy can be solved by making better use of the collective inteligence, as this will increase the legitimacy and effectiveness of democratic processes.

The system of augmented democracy, in fact, should help stimulate positive debate in the process of political decision-making. The system will also allow a series of tests to be carried out before a final decision is made on a particular vital issue. In addition, one of the most important functions of augmented democracy is forecasting based on large volumes of objectively obtained data (big data). It will be possible to predict how citizen-users will vote for any draft law discussed in the legislature or executive. This will make the behavior of citizens more than predictable and therefore manageable.

When embedding high technologies into political processes, it is necessary to take into account the fact that political decisions are always the result of complex and multisectoral relationships of all social spheres, therefore, they require the ability to conduct a multidimensional analysis. To do this, it is necessary to develop and rely on artificial general intelligence (AGI), which will be able to make multi-component "deep analyzes" and make more accurate decisions based on them. In a sense, this will mean a complete transformation or demolition of the current political institutions and processes.

With regard to increasing the level of trust in democracy with augmented technologies, the states must initially answer the question, if the authorities are frank with their citizens, and if the attempts of digitizing and augmenting political processes don’t contribute to the legitimization of "total digital surveillance".